## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 08.04.2026թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2026/04-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **«23» 04 2026թ.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026 թվականի ապրիլի 9-ի N 465 - Ն որոշումը և Կողմերի միջև 2025 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N **ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2026/04-1** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան, գինը և վճարման պայմանները

Կողմերը փոխադարձ համաձայնվեցին.

1.1 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

1.2 Սահմանել, որ սույն համաձայնագրի գինը 2026 թվականի համար կազմում է 51,508,800 (հիսունմեկ միլիոն հինգ հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

### 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,<br>ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011018703<br>ՀՎՀՀ 02565518 | «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ<br>ք.Աբովյան, Խաղաղության 1<br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930011980040100<br>ՀՎՀՀ 00096001<br>Տնօրեն՝ |
| Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան | Հայկ Ֆարամազյան |
| GASPARYAN DAVIT 1407810154 Digitally signed by GASPARYAN DAVIT | 2026-04-23 09:54:49 GMT+04:00 Հաստատված է ՀԾՆԿ-ի կողմից mID |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |